Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 474 - Ա
որոշման

«ԼԱԹԵ» ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԵՔՍՏԻԼԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	1) Աջակցել քաղաք Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում բնակվող՝ ձեռագործությամբ զբաղվող սոցիալապես անապահով 50 և ավելի տարիք ունեցող կանանց, ովքեր հասարակական հիմունքներով աշխատանք կարող են իրականացնել և վերամշակված տեքստիլից ստեղծեն այլ արտադրանքներ. 2) Հնացած և օգտագործման համար ոչ պիտանի տեքստիլ նյութերի հավաքագրման, վերամշակման միջոցով պահպանել Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	1) Աննա Բաղալյան (քաղաք Երևան, անձնագրի տվյալները՝ AX0217158, տրված է 2024 թվականի ապրիլի 15-ին, 003-ի կողմից). 2) Կարինե Ավանյան (քաղաք Երևան, անձնագրի տվյալները՝ AV0530406, տրված է 2022 թվականի նոյեմբերի 21-ին, 004-ի կողմից). 3) Լիլիթ Հովհաննիսյան (քաղաք Երևան, անձնագրի տվյալները՝ AT0275961, տրված է 2019 թվականի օգոստոսի 15-ին, 011-ի կողմից). 4) Սվետլանա Հարությունյան (քաղաք Երևան, նույնականացման քարտի տվյալները՝ 006713101, տրված է 2015 թվականի օգոստոսի 20-ին, 008-ի կողմից).

		5) Ելենա Կուրչավովա (քաղաք Մոսկվա, անձնագրի տվյալները՝ 75 9203776, տրված է 2018 թվականի սեպտեմբերի 6-ին, МВД 77614). 6) Սուսաննա Ամիրխանյան (քաղաք Երևան, անձնագրի տվյալները՝ BA3572794, տրված է 2021 թվականի հունիսի 4-ին, 011-ի կողմից). 7) Սուրեն Կարաբեկյան (քաղաք Համբուրգ, անձնագրի տվյալները՝ C1W0XZNN8, տրված է 2017 թվականի հունիսի 2-ին, KUNDENZ. SÜDERELBE):
4.	Ծրագիրը կատարողը	«Լաթե» բնապահպանական հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ամառանոցային առաջին տարածք 9Ա, Մալաթիա-Սեբաստիա 0081, ՀՎՀՀ՝ 01343303):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Քաղաք Երևան և Հայաստանի Հանրապետության մարզեր, բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	1,295,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Քաղաք Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում բնակվող՝ ձեռագործությամբ զբաղվող սոցիալապես անապահով 50 և ավելի տարիք ունեցող կանայք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2028 թվականի օգոստոսի 1-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և ներմուծել տեքստիլի թափոնների վերամշակման համար նախատեսված սարքավորումներ՝ 1,295,000 դրամ արժողությամբ: Վերամշակված տեքստիլը անհատույց տրամադրվելու է ծրագրի շահառուներին: Միջոցառումները նախատեսվում են իրականացնել 2025 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2028 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Տեքստիլի թափոնները մանրացնող սարքավորման ձեռքբերում և ներ–մուծում՝ 615,000 դրամ արժողությամբ. 2) Լվացման և չորացման սարքավորումների ձեռքբերում՝ 680,000 դրամ արժողությամբ:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Տեղական ինքնակառավարման մարմիններ, Շրջակա միջավայրի նախարարություն:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

15.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ